

— Սեր վերջին թուով Սաղի և Վերեկու կողմերը ծագած խռովութեանց վերայ համառօտ տեսութիւն մի ըրինք։ Ինչպէս որ ծանուցած էինք, արքունի զօրաց միջամտութեամբ բարեկարգութիւնը հաստատուելէն յետոյ, Վամասկոսի վսեմօրհայ Սիւշիւր Սէհմէտ իւշտիւ փաշայն դարձաւ իւր բանակաւն ի Վամասկոս, և ի համբաւոյ կ'ըսուի թէ ի իրանան պիտի երթայ, ուր նոր դէպքերն իւր ներկայութիւնն ինդրած են։ Եւ այժմ Սաղի սրահպանութիւն տեղւոյս վաշտ մի զօրաց յանձնուած է, ուր պիտի մնան մինչեւ Ռ. Վրան նոր տընօրէնութեամբ ուրիշ վաշտ մի քաղաքապահ զօրք տահմանուի, և յետ այնորիկ նոյն կողմերու կառավարութիւնը Վամասկոսի Սիւշիւրութեան պիտի յանձնուի։ Սաղի հին ու կիսակործան բերդերը սկսուած է արդէն նորոգուիլ մեծ գործունէութեամբ։ Յորդանան գետին վերայ եւս կամուրջ մի ձգելու խօսք կայր վսեմօրհայ Սիւշիւրին հոն եղած ժամանակ. բայց այս լուրը հաստատութեան կարօտ է, ինչպէս և արդէն իսկ խափանուեցաւ նորա զօրոյցը, նոյնպէս և Սաղի մինչեւ ի սուրբ Լըուսագէմ պահապան զօրաց համար աշտարակներու հաստատութիւնը, որ պիտի սկսուի ըսած էինք մեր վերջին թուով, առ այժմ խօսքը չկայ։ Կրտուի թէ Շէխ Տիապի եղբայրը, որ իւր հրապատակութիւնը ցոյց տուած էր տէրութեան, Սաղի կառավարիչ հաստատուած է, նմանապէս և նորա մարդոց ուրիշ գլխաւոր պաշտօններ շնորհուած է։ Իսկ Շէխ Տիապ տակաւին իւր յամառութեան մէջ կը մնայ և չուզէր օր յառաջ իւր հպատակութիւնը յայտնել բարեգութ Տէրութեան, որ

ինչպէս յայտնի է, անշուշտ նորա եւս մեծ և պատուաւոր պաշտօն մի շնորհելու պատրաստ է, եթէ հաւատարմութեամբ ծառայելուն վստահութիւն ունենայ։

— Քաղաքիս արքունի զօրաց հրամանատար Վսեմ ի իւր փաշայն, որու համար ըսած էինք ի Սաղ առ Վսեմ, Սիւշիւր փաշայն երթալը, անցեալ տմայ 29 ին ետ դառնալով, մեկնեցաւ ի Յոպէ, ճանապարհի շինութեան սկիզբն տալու համար, և առ այժմ Սիւհէնտիսի գալստեան Լըսպատուի։ Յոպէէն մինչեւ ի սուրբ քաղաքս գալու համար երկու ճանապարհ կայ, մին ուղտի և միւսն հատարակ ուղեւորաց, որ թէպէտ և միւսէն կարճ է, այսու ամենայնիւ լեւնտ և ժայռոտ ըլլալուն դժուարակիս է, իսկ խռովինն թէպէտ քիչ մի երկար՝ բայց համեմատաբար հարթ է և դիւրակիս, և մեծագոյն մասամբ ձորամէջ։ Սոյն երկու ճանապարհաց հեռաւորութիւն մասին իրարմէ ունեցած տարբերութիւնը խմանալով, յետ այնորիկ գալիք Սիւհէնտիսին որոշմանը պիտի սպառուի կ'ըսեն։

— Ենցեալ օր հասաւ ի քաղաքս Լըստրիոյ տէրութեան նոր հիւպատուսը, և իրենց նորաչէն վանքն իջաւ։ Վանի մի օրէն յետոյ թէ քաղաքիս Վսեմ, կառավարիչ Նադիֆ փաշայն և թէ Սեմ, հիւպատուս փութացին նորա գալուստը շնորհաւորելու։ Եւ այն օրը գնաց նաեւ Ս. Լըստրոյս կողմէն Վերապատիւ Լըստրաք Կարապետ Սրբազան արքեպիսկոպոսը քանի մի վարդապետօք և թարգմանական փոխանօրդ Լըփ. Կիրեմ վարդապետին հետ, որ մարդասիրութիւն և արժանաւոր պատուով ընդունեց զիրենք։